1918 — ՄԱ

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր հանրապետությունը ուժերի գերագույն լարումով, մեծ մաքառումով շարունակում է անկախ պետականության հաստատման գործընթացը, որը հոչակվել է 1990 թվականի օգոստոսի 23-ին: Պետք է ասել, որ հայ ժողովուրդը բազում զրկանքներ կրելով, պատվով տանելով իր ուսերին դրված բեռը, հաստատուն կերպով առաջ է գընում իր իսկ ընտրած ճանապարհով, լավ գիտակցելով, որ փուշ ու տատասկներով է պատված այն: Այդպես է. ոչ մի գերիսնդիր դյուրինությամբ, առանց զրկանքների ու զոհաբերությունների չի լուծվում: Մայրուղի հասնելու համար դեռ շատ մեծ ու փոքր լայն ու նեղ, շատ խորդուբորդ ճանապարհներ պիտի հաղթահարվեն: Իսկ դա հնարավոր է միայն ազգի համախմբման մի ջոցով, դարձած մեկ բռունցք, մեկ ուժ, մեկ միտք:

Մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք մեր ձեռքից բաց թողնելու ճակատագրի կամոք մեզ ընձեռած այս հնարավորությունը, բացառիկ «նրվերը»: Սերունդները մեզ չեն ների, եթե մենք որպես ազատ ու անկախ պետություն չկայանանք, կիսատ ճանապարհից կրկին գլորվենք դեպի անդունդ: Մեր առաջին հանրապետությունը՝ 1918 թվականի մայիսի 28-ին հոչակված, գոյատևեց ընդամենը երկուսուկես տարի, մինչև 1920 թվականը: Այնինչ մենք այդ օրվան սպասել էինք ավելի քան վեց դար: Պատմության դավադիր ձեռքը խանգարեց մեզ այն ժամանակ: Մեզ խանգարեցին աշխարհի հզորների դիվանագիտական խաղերը, մեր շահերը իրենց շահերին չհամընկնելու հանգամանքը խոչընդոտեց: Բայց էլի որ փառք տանք աստծուն, որ դրանից հետո պահպանեցինք մեր գոյությունը, եղանք խորհրդային հանրապետություն, հասանք որոշակի հաջողությունների, ինչքանով որ դա հնարավոր էր այդ հասարակարգում: Այդ տարիները ևս մեր պատմության անքակտելի մասն են կազմում, որոնց ընթացքում մենք նորից երազել ու ցանկացել ենք վերահաստատել մայիսի 28-ը՝ մեր անկախության օրը, որն այսուհետև ևս հայ ժողովրդի բոլոր սերունդների համար մնալու է որպես սուրբ օր, աստծո օր, մեր երազանքների իրականացման, հաստատման օր:

Այո, անհամար զրկանքներ է կրում այսօր հայ ժողովուրդը իր հուսո մայիսը պաշտպանելու, իր արդար դատին՝ Արցախին թիկունք կանգնելու ճգնապարհին: Այս տարիները ապացուցեցին, որ մենք ազատ ու անկախ ապրելու կոչված ազգ ենք, որ մենք ուժ ու կորով ունենք հաղթահարելու ցանկացած դժվարություն, ցանկացած խոչընդոտ: Մենք վաստակեցինք այդ իրավունքը:

Ու եթե առաջներում սուրբ երկյուղածությամբ էինք հիշում մայիսի 28-ը, մեր եռագույնը, ապա հետայսու պիտի հիշենք ու տոնենք հպարտությամբ, հոգու անհուն բերկրանքով, սիրով ու հավատով: Հետայսու մեր եռագույնը պիտի շողշողա, պիտի ծփա հայոց երկնակամարում՝ ազդարարելով մեր հարատևությունը պատմության քառուղիներում: